

ԹԵՈՒԱԹԻ ԱՊՈՍՏՈՐԱՆԸ

(Ազատ փոխադրութիւն)

ԻՄ հայրենիքը իսպառ մոռացած,
Ծով արցունքներով աչքերս լցուած,
Բիւր վշտեր դարսած կրծքիս ցաւազար՝
Այսպէս ոտք դրայ ապիրատ աշխարհ...
Ոչինչ համարած պատկառ ամօթի՝
Մերկ, կիսահեծան, ծարաւ, անօթի՝
Ման եկայ գտնել բաղդիս բնակարան,
Ոչ որ չըկարաց ցոյց տալ ինձ նամական.
Երկար բաղիւնցի դուռը իմ բաղդի,
Բայց չ'արժանացայ գէթ մի «լումայի»:
Աշխատանքի մէջ ես տեսայ տանջանք,
Ոչ, ծանլը թուաց ինձ այդպիսի կեանք...
Բաղիւնցի ամրոց, ուր «փառքն» է ապրում,
— «Հեռի, — ասեցին, — քեզ չենք ճանաչում.»
Բաղիւնցի անթիւ կողպած դարբաններ՝
Լսեցի միջից դառն կատակներ...
Անգո՛ւթ էր բաղդը.... Նա ինձ չը ծպտաց,
Իմ ճակատագիրը ոչ ոք չը կարդաց.
Այժմ մի հատիկ «տուն» է մնացել,
Նրբան տակաւին ես չեմ մոռացել:
Քալներս իսկոյն այն կողմն ուղղեցի,
Անպարեցի ես շուտով այն տեղ.
Նրբա դըռնակն էլ բաղիւն փորձեցի,
Որպէս զի գտնեմ վերքերիս մի դեղ....
Բայց այնտեղ ո՛րքան անխուղ էր քուն,
Մոռացայ կրած ցաւերըս անհուն.
Ու այնուհետեւ «վտից» ազատուած՝
Թեքեցի այնտեղ զլուխ վատտակած...
«Ապաստարանս էր այն նեղ Գերեզման»,
Ուր քրոջսաները միայն «հանգիստ» կան...

Գրիգոր Բալասանյան

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

ՁԵՑՈՒՆՑԻ ԱՒԱՆԴԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԸ

ԱՅՍ աշխատութիւնը համեմատութիւն մըն է Չէյրունցի աշակերտական պատմութեան մը և Եղիստացոց Համալսիկիտոս քաղաքի պատմութեան, զոր Հերոդոտոս մէջ կը բերէ: Չէյրունցոց պատմութիւնը առնուած է Պր. Յ. Յ. Ալլահպէրտեանի 1885 թուին Պոլիս հրատարակած ՈՒՆԻԱ կամ ՋԵՑՈՒՆ ընտիր աշխատութիւնէն (տես էջ 152—159), միայն շատ փոքր փոփոխութիւն մը մտցնելով: Չէյրունցի արտասանութեան մէջ ր տառը յ կը հնչուի. Ալլահպէրտեան զայն ր պահած է, իսկ այս աշխատութեան մէջ դրուած է միշտ յ: Դիտարեան համար անեցոյցած է նաեւ գրական լեզուով քարգմանութիւնը և բաժնուած է հատուածներու:

Երկու պատմութիւններն իրարու հետ քացորդապէս նոյն են. տարբերութիւնները կը կայանան ինչ ինչ երկրորդական կետերու մէջ՝ որոնք յարմարցուած են տեղական պարագաներու: Չէյրունցոց պատմութեան գլխաւոր տարբերութիւնն այն է՝ որ ասուց պատմութեան քէ՛ սկզբն և քէ՛ վերջը քննութիւն մը անեցոյցած են՝ որ կը բռնէ մեր Ա, Բ, Գ և Դ հատուածները. այս մասերը կը պակսին Հերոդոտոսի մէջ. նա միայն մեր Ե հատուածն ունի:

Երկու պատմութիւններուն համեմատութիւնը հայ բանասիրութեան և գաւառաբնութեան համար օգտակար նիւթ մըն է. մանաւանդ որ այդ պատմութիւնը կայ նաեւ ուրիշ երոսկական ազգերու մէջ ևս առանց քարքար:

ՀՐԱԶԵԱՑ Ց. ԱՅՆՈՒՆ

ԳՈՂԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԲՆԱԳԻՐ

Ա

ԹԱՐԳՄ.

Ի՛րի կիցի պայույ մը. էաս պայույը աղլ-կին մը ու տողո մը ունցիլ է. աղլկինը միկի մը նիշանիլ է. էաս աղլկինը նիշանո՞ծը գուղութիւն կո կենէ, ինք էա ուղացիլ է է-նիլ. էաս մտքեօվը գացիլ է մէօյը ասիլ է թը՝ Ունա, ենիշտէն գուղութիւն կո կենէ, իս էա կենիմ. էան էա ասիլ է թը՝ Եւալյըմ, Սարոժ կու նիդանո՛ւ. տղէան զոք մէա ասոց թը՝ իյլէա կենիմ. մէայն էա ասիլ է թը՝ է, կանէ գեղիցէն իյթոմ, Սարոժ տիսնում չի՛ք կուսէ. հիկէա իզիմ տո նը՝ էյո. չիտո էա նը՝ մենի:

Պառաւ մը կայ եղեր. այս պառաւը աղ-չիկ մը և տղայ մը ունի եղեր. աղչիկը մէ-կու մը նշաներ է. այս աղչկան նշանածը գողութիւն կ'ընէ, ինք ալ (եղբայրը) ուզեր է ընել. այս մտքով գացեր է մօրը ըսեր է թէ՝ Մայր, քեռայրը գողութիւն կ'ընէ, ես ալ ընեմ. այն ալ ըսեր է թէ՝ Ո՛րդիս, Աս-տուած կը նեղանայ. տղան անգամ մ'ալ ը-սաւ թէ՝ Անպատճառ ընեմ. մայրն ալ ըսեր է թէ, է՛հ, կայնէ եկեղեցին երթամ, Աս-տուած տեսնեմ ի՛նչ կ'ըսէ. եթէ հրաման տայ (նէ՛) ըրէ, չ'տայ ալ նէ՛ մի՛ ընեմ:

Բ

Էաս ասոժ վոխտը տեղէան գաղտով կոյ-թո գեղիցէն կո մուտն ու խույանըն խալը կո պահուրտը, չիւլ էան ատինը մէայն էա կոյթո գեղիցէն կո մուտն ու Ասուծու կո ճու-վո՛ կուսէ թը. « Ասրոժ, իմ տեղէան կուսէ թը՝ գուղութիւն կենիմ. տոս հյամոն նը՝ թուզ էնէ. չէա նը՝ թուզ չենէ »:

Էան վոխտը տեղէան կուսէ թը՝ Սարոժ կու-սէ թը թուզ էնէ: Մէայը գեղիցոն իլոժ վոխ-տը գաղտով տեղէան կո փոխի, տունը կոպո կը տըստը. մէայը սանտոխը կո կիլլէ նը՝ տեղէան կուսէ թը՝ քելէ տիսնում Սարոժ չի՛ք ասոց. էան էա կուսէ « Եւալյըմ, էս էօյ բոն չասոց. ասոց թը նախը մէա իգոս նը՝ բոն մը կ'իսինք »: Ինտէաս էօնիւլ վիշէան իյկու նախը էա կոյթո, տեղէան էա Սարոժ տեյի ինտէաս պատասխոն կոտո. իտէ ճիւթը մէայը կոպո կուսէ թը՝ Եւալյըմ, Սարոժ հյա-մոն տովով. գոնա չի՛ք կուզիս էյո՛:

Այս ըսած ատեն տղան գաղտուկ կ'երթայ եկեղեցին կը մտնայ ու խորանին ետեւը կը պահուրտի. մինչև այն ատեն որ մայրն ալ կ'երթայ եկեղեցին կը մտնայ ու Աստուծոյ կը պօռայ՝ կ'ըսէ թէ. « Աստուած, իմ տղան կ'ըսէ թէ՝ գողութիւն ընեմ. տաս հրաման նէ՛ թող ընէ. չէ ալ նէ՛ թող չընէ »:

Այն ատեն տղան կ'ըսէ թէ՝ Աստուած կը-սէ թէ թող ընէ: Մայրը եկեղեցիէն ելած ատեն գաղտուկ տղան կը փախի, տունը կու գայ կը նստի. մայրը սանգուիւր կ'իլլէ նէ՛ տղան կըսէ թէ՝ քալէ տեսնեմ Աստուած ի՛նչ ըսաւ. այն ալ կ'ըսէ. « Ո՛րդիս, այս օր բան չըսաւ. բուռ թէ անգամ մ'ալ գաս նէ՛ բան մը կ'ըսեմք »: Այսպէս անոր վրաս եր-կու անգամ ալ կ'երթայ, տղան ալ իրրև Աս-տուած պատասխան կու տայ. վերջապէս մայրը կու գայ կ'ըսէ թէ՝ Չաւակ, Աստուած հրա-ման տուաւ. գնա ինչ կ'ուզես ըրէ՛:

Գ

Էան տանորը կոյթոյ ենիշտէն կո գոտ-նո կուսէ թը՝ ենիշտո՛ ըսել էա հիտիտ ընկիլ պիտը էնիս. ենիշտէն էա կուսէ թը՝ գոն իմ հիտը հիչ ընկիլ կանքն նը, քելոյ կուսէ արնամըջ էյո. էան էա կուսէ թը կենիմ:

Այն ատեն կ'երթայ քեռայրը կը գտնայ կ'ըսէ թէ՝ Քեռայր, զիս ալ հետդ ընկեր պի-տի ընես. քեռայրն ալ կ'ըսէ թէ՝ գոն իմ հիտը (հիչ) ընկեր կրնաս ըլլալ. քալէ կ'ըսէ փորձ ըրէ. այն ալ կըսէ թէ՝ կ'ընեմ:

Կո կրկին կոյթոն միկտիղ բայտու մը տոկ, եհիշտեան վիյ կո հեյէ կո տիսնու ույ բայտունն ծէայը բըղղիկ մը կո. կոսէ թը՝ իլ օտո բըղղիկը օյ. էանն էա ղընթիկ մը տիղ կո կիւլէ, իսիվոնց կո կիլնոյ կոսէ թը՝ էղթէայ, դոնն իլ տպօս մը տիսնու մասնում, հապո իա էա իլլիմ, ինիշտեան էա կո կրկին քիշ մը տիղ նը՝ փնշը տիղ կո կանցնը, շալփոյը տիղ կո փակչի նը՝ կո հանէ նիւրիկէն կո կրկին, կո կայնու բըղղիկը, կո կիլնո կո տիսնու ույ շալփոյը օյ գո. կոսէ թը՝ շալփոյիս շիղղով. պորուզը կոսէ թը՝ հասիկ, իշտեա ին, տէաս կենին. էն էա աձեօպիւրով կոսէ թը՝ դոն ղիտոն էս փիլ իս. է՛հ, ինտէաս է նը ուղէ իյթոնը. էանն էա կոսէ թը եօյ իյթոնը. էն էա կոսէ թը՝ թէագէտվիւյէն խեզնեան պատիլը իյթոնը:

Դ

Էաս մօթէօվ կոյթոն գիշիւյով կո պատ. ինն թէագէտվիւյէն խեզնեան, կոգոն տոնը. պորուզը կոսէ թը՝ եհիշտո, իս բոն մը էնիմ. էն էա կոսէ թը չիլթ. — իյկու ղոյշոյն տույ՝ իյթոմ պեղիչին սօնոնն այնում, սիշեան իյթոմ ծախիմ, հեամ իլէա տիսնում թը չիլթ կոսին խազնին համոյ. եհիշտեան էա իյկու ղոյշոյն կո կուտոյ:

Էաս կոյթօ կո կայնու սոնոնը ծախիլ, սիշեան կո մոտնո սօնոնը կո ծախէ, կո տիսնու ույ պիկպաշին կոսէ թը՝ գիշիւյիս թէա. գէտվիւյէն խեզնեան պատյոն է. պորուզը կոսէ թը հապը չիլթ պիտը էնիթ. պիկպաշիքն էա կոսին. ինցո ինցո տիղ պիտը իյթոնը տըս. տընթ պեհիլթ. եկեայ գիւրը իգո նը՝ պիտը բլնիլթ սպանիլթ. էաս բեկոնը կո լսէ, կոգո եհիշտին կոսէ թը՝ ինցո ինցո կոսին: Էաս բեկոնը տաննոյնն էնիլթօվ էան գիշիլը էան տոտոնն տիղվըն ի վիլ չիլթոն. հապ պաշ. իս տիղոց մը կոյթոն կո պատյին, կո գոն իյէկու տիղը. կոնոն նը պորուզը էվէա իյկու ղոյշոյն կո կայնու կոյթոն սոնոնը կո կայ. նու, սիշեան կոյթոն սօնոնը կո ծախէ, կո տիսնու ույ պիկպաշիքը կոսին թը՝ գիշիլս էա էվէա պատյոն է. պորուզն էա կոսէ թը հապը չիլթ պիտը էնիթ. էնիլ էա կոսին թը գիշիլիս պիտը իյթոնը, հիւյ մը պիտը բանոնը, բայցոն ձըգ պիտը նոնը, գիւրը իգո նը՝ միլը բնկնը:

Էաս բեկոնը կո լսէ, կոգո իյ միտքը կո գնէ, կոսէ թը՝ եհիշտին շախիմ. էան գիշիլն էա ձըգըն պայապոյն էա գացըն նը՝ եհիշտին կոսէ թը՝ դոն էյէալ անցէյ. էան էա էյէալ կո անցնը. ղընթիկ մը կոյթօ նը՝ կը

Կ'եյլեն կ'երթան մէկտեղ բարտիլ մը տակ, քեռայրը վեր կը նայի կը տեսնէ որ բարտիին ծայրը գտակ մը կայ. կ'ըսէ թէ՝ ել այդ գտակը աւ. այն ալ քիշ մը տեղ կ'եյլէ, յետոյ կ'իջնայ կ'ըսէ թէ՝ եղբայր, դոնն ել հեղ մը տեսնեմ սորվիմ, յետոյ ես ալ եյլեմ. Գեռայրն ալ կ'եյլէ քիշ մը տեղ նէ՝ քոյնցը տեղ (մը) կ'առննի, շալփարը տեղ (մը) կը կառչի նէ՝ կը հանէ նորէն կ'եյլէ, կ'առնէ գտակը, կ'իջնայ կը տեսնայ որ շալփարը չկայ. կ'ըսէ թէ՝ շալփարս Բնչ իղաւ. աղան կ'ըսէ թէ՝ ահաւասիկ, ահա այսպէս կ'ընեն. այն ալ զարմանալով կ'ըսէ թէ՝ դոնն քան զիս առաւել ես. է՛հ, այդպէս է նէ քալէ երթանք. այն ալ կ'ըսէ թէ՝ ո՞ր երթանք. այն ալ կ'ըսէ թէ՝ թագաւորին գանձատունը գողնալ երթանք:

Այս մօթէօվ կ'երթան գիշերով կը կողպատեն թագաւորին գանձատունը, կու գան տուն. մանչը կ'ըսէ թէ՝ քեռայր, ես բան մը ընեմ. այն ալ կ'ըսէ թէ Բնչ. — երկու դուրուն տուր՝ երթամ շուկայէն հաց առնեմ, պաւտ երթամ ծախեմ, միանգամայն տեսնեմ թէ Բնչ կ'ըսեն գանձին համար. քեռայրն ալ երկու դուրուն կու տայ:

Այս կ'երթայ կ'առնէ հացը ծախե(ու համար), պաւտ կը մտնայ հացը կը ծախէ, կը տեսնէ որ հագարապետը կ'ըսէ թէ՝ գիշերս թագաւորին գանձը կողոպտուած է. մանչը կ'ըսէ թէ հապա Բնչ պիտի ընէք. հագարապետներն ալ կ'ըսեն. այսպէս այսպէս տեղ պիտի երթանք նստինք հսկենք. իթէ գողը գայ (նէ)՝ պիտի բռնենք սպաննենք. այս կերպ կը լսէ, կու գայ քեռայրին կ'ըսէ թէ՝ այսպէս կ'ըսեն: Այս կերպ խորհրդակցելով՝ այն գիշերը այն նստած տեղին վրայ չեն երթար. հապա ուրիշ տեղէ մը կ'երթան կը կողոպտեն, կուգան երէկուան տեղը. կ'ըլլան նէ՝ մանչը զարթեալ (և այլ) երկու դուրուն կ'առնէ կ'երթայ հապ կ'առնէ, պաւտ կ'երթայ, հացը կը ծախէ, կը տեսնէ որ հագարապետները կ'ըսեն թէ՝ գիշերս ալ զարթեալ կողոպտուած է. մանչն ալ կ'ըսէ թէ հապա Բնչ պիտի ընէք. անոնք ալ կ'ըսեն թէ գիշերս պիտի երթանք, հոր մը պիտի բանանք. եռացած ձիւթ պիտի լեցնենք, գողը գայ նէ՝ միլը ինչայ:

Այս կերպ կը լսէ, կուգայ իր միտքը կը գնէ, կ'ըսէ թէ՝ քեռայրին շուքեմ. այն գիշերն ալ ձիւթին կողով գացին նէ՝ քեռայրին կ'ըսէ թէ՝ դոնն առաջ անցիր. այն ալ առաջ կ'առննի. քիշ մը կ'երթայ նէ՝ կ'իջնայ ձիւ-

կրնկնը ձրդըն միջը, չիւյ փուղըը կո կիլլէ, պուրգն էա քեզ մը քիչկան կո կայէ կո պեւէ: Թէագէամիլայէն խեղճեան կո փնայէ, կո պատէ: քիչկն էա կո կայնու, կոգո տունը կո քեկպահէ Թը՝ հէյ մի լէաք:

Ինտէաս կոսէ, կոյթո սունդն կո կայնու կոյթո սէյան: Էլ կ'սումանը կո ծախէ նը՝ պիկպաշիքը Էլ կ'ա կոսին Թը՝ քիչկն գիւղը գոտաք քանը՝ քիչկան օշ գո: պուրգը կո հայցնէ Թը հապը լինջ պիտը էնիք: էնի կոսին Թը քաղաքը պիտը բիլլինը իւլ կո կուլօ նը՝ էան տունը պիտը կըտըցընինք: պուրգն էա քեզ մը կո վագէ տունը կո գօ, կոսէ Թը՝ չիլլէք, չիլլէք կուլէաք: էնի էա կոսին Թը չինք լօ:

Պուրգը բլրվիցով նը՝ լու ու խաղալ դեշտիցին: անձոխ էան ատինը պիկպաշիքը շատ ես քեայ էա հիտովուն իկին տիսոն ուլ կո կուլուն, հիւմըն դոյը մեծիչիւմիչ էյին իլոն տե գացըն:

Կուրգը իկիք տիտով ուլ դոյը մեծիչիւմիչ էյո՞՞՞ է, հայցըլի է Թը էաս միկիյին ոտաշը լինք է: էնի էա ասած է Թը՝ միկը կո կուլօք նը պիկպաշիքը իկին մեծիչիւմիչ էյին տե գացըն: պուրգն էա դեշտից իւլիւցը ասիլ: Մթիւ է նը՝ պուրգը տիչիւմիչ էյիլ է, հըմըն էլ ու մուլ էյիլ է, գացը աշխայհը դոյ իյինց դոյը կիմի մեծիչիւմիչ էյիլ է: լուսցըլ է նը պիկպաշիքը, եպէյին էա իկո՞՞՞ է Թը՝ պիտը կըտըցընին, տիսո՞՞ է ուլ՝ աշխայհը դոյ մեծիչիւմիչ էյո՞՞՞ է, կոյթոն կոսին Թը գացը իյէկ դոյ մեծիչիւմիչ էյօք, Էօտօլ միցըք տիսօք ու աշխայհը դոյ մեծիչիւմիչ էյօ՞՞՞ է: Թէագէամիլայ տիչիւմիչ իլով ասոց Թը՝ ինտէաս է նը իւլ իւլ ասէ Թը քու գիւղն իմ՝ նը՝ աղլիկն մը ունըմ, իր կուտօմ:

Թին մէլը, մինչև որ վիզը կ'իլլէ, մանչն ալ շուտ մը գլուխը կը կտրէ կը պահէ: Թաւորին գանձատունը կը փնտռէ, կը կողպատէ, գլուխն ալ կ'առնէ, կուգայ տունը կը իրատէ Թէ՝ բնաւ մի լաք:

Այսպէս կ'ըսէ, կ'երթայ հաց կ'առնէ, կ'երթայ պալատը: գարձեալ հացը կը ծախէ նէ՝ հագարապետները գարձեալ կ'ըսեն Թէ դիւշերս գողը գտանք, բայց գլուխը չկայ: մանչը կը հարցնէ Թէ հապա ինչ պիտի ընէք: անոնք կ'ըսեն Թէ քաղաքը պիտի պտտինք ով կուլայ նէ՝ այն տունը պիտի այրենք: մանչ ալ շուտ մը կը վագէ տուն կու գայ, կ'ըսէ Թէ չիլլաք լաք: անոնք ալ կ'ըսեն Թէ չենք լաք:

Մանչը գնաց նէ՝ լալ ու խաղալ սկսան: բայց այն ատենը հագարապետները շատ դիւշուոր ալ հետերնին եկան՝ տեսան որ կուլան, անմիջապէս դուռը կնքեցին՝ ելան գացին:

Մանչը եկաւ տեսաւ որ դուռը կնքուած է, հարցուցեր է Թէ այս կնիքին պատճառն ինչ է: անոնք ալ ըսած են Թէ՝ մենք կուլայիւք նէ հագարապետներն եկան կնքեցին ու գացին: մանչն ալ սկսաւ յիշոցք ըսել (հայհոյել): Մթներ է նէ՝ մանչը մտածեր է, իսկոյն իւլ ու մուր չիներ է, գացը աշխարհքին (ամէնպէս) դուռն իրենց դռան պէս կնքեր է: լուսցըլ է նէ հագարապետները, գլուշուորներն ալ եկած են Թէ՝ պիտի այրեն, տեսած են որ ամէնուն դուռը կնքուած է: կ'երաթան կ'ըսեն Թէ մենք երէկ դուռ մը կնքեցինք, այսօր գացինք, տեսանք ու ամէնուն դուռը կնքուած է: Թագաւորը մտածեց ըսաւ Թէ՝ այդպէս է նէ ով որ ըսէ Թէ քու գողն եմ՝ նէ՝ աղլիկ մը ունիմ, իրեն կուտամ:

Ե

Էաս պուրգը կո կիլլէ Թէագէամիլայէն տէյան կոյթօ, կոսէ Թը՝ իս իմ Թէագէամիլայէն գիւղը: պիկպաշիքը կոսին Թը՝ մուլն էլ վլէաս, գոն օ՞մ շուին իս ուլ Թէագէամիլայէն խեղճեան պիտը պատախ: Էան էա կոսէ Թը գացէք, ասէք Թէագէամիլայէն, կուլգէ նը՝ Թուլ գօ փէյեան ցըցընիմ: Էան էա ասոց, գացէք տիսէք տախը իրով է: էնի էա կոյթոն կո տիսնուն ուլ՝ հուլը մը մէլ իլլէնքը իսկի կօ, կոգոն Թէագէամիլայէն կոսին Թը տախ տիտըք էաս է: Թէագէամիլայ կո կալտօ, կոսէ Թը հէօն ճվագէք: գացըն ճվագէք, բերըն Թէագէամիլայէն աղլիկը, Թէագէամիլայը ասոց Թը՝ եալլըմ, համօմ իւղիւյդ

Այս մանչը կ'իլլէ Թագաւորին պալատը կ'երթայ, կ'ըսէ Թէ ես եմ Թագաւորին գողը: հագարապետները կ'ըսեն Թէ՝ միտ լրագդ: դուն որ շուին ես որ Թագաւորին գանձը պիտի կողպատես: կոսէ ալ կ'ըսէ Թէ գացէք, ըսէք Թագաւորին, ինչէն նէ՝ Թող գայ դրաւ մը ցուցնեմ: այն ալ ըսաւ, գացէք տեսէք ճիշտ իրաւ: անոնք ալ կ'երթան կը տեսնեն որ հորի մը մէլ լի ոսկի կայ, կու գան Թագաւորին կ'ըսեն Թէ իրաւ տեսանք այս է: Թագաւորը կը հաւատայ, կ'ըսէ Թէ հոս կանչեցէք: գացին կանչեցին, բերին Թագաւորին աղլիկը, Թագաւորը ըսաւ Թէ՝ Զաւակա, հիմայ իրաւ դուն ես իմ գողը: այն

դո՞ւն իս իմ գիւղը. էան էա ասոց թը իս իմ. է՛ եսովքսմ, ասոց, հումմո իս աղլկին մը ոււ նըմ՝ քիզ պիտը տոմ, եկեայ բոն մէա ասիմ կանքս էնի նը. էան էա ասոց թը չի՞ք է. ասոց թը հումմո տո ոնոյ միկէալ թէագէաւ վիւալ թըղզ թըղզ կո կենէ, կոսէ թը՝ չոց գեղզ եղլլէ է ույ քէնի աստ իս կանքս գոտնո, հէյէ ասիմ, հումմո դոն էօնիւյէա բոն մը կանքս էնի. էան էա կոսէ թը բոնը դոդոյ է, իլէք կոսէ, մաքի մը ու էա՞ծ մը բիլէք. էնի էա կո բիլին, քեզ մը կո գենէ, տէօհէիւ կո հանէ, կո կայնու հիտը տէ կոյ. թօ թէագէավիւյէն սային խիւրը. հէօն էա պտիկիկ տէնկիթ մը կո կիւնոյ. էաս պողուզը տէօհէիւյէ կո կուլուցունէ, կո հիծնօ լըլըն վոյձովոն կոյթօ թէագէավիւյէն սային քէօ վը. մաքուն տէօհէիւյէն վիլէան մաղը գուլիս իլի մը կո կանքնէ, տէօհէիւյէ կո հագ. նը, խըշտ մէա ձէայը կո կայնու, քայսոն սիքիօ կո կուլնցնօ, կո կայցնէ սիքիօ մը կո կիլլէ, քայսունէա կո կայցնէ պատիւնէն կո հիլէ ույ թէագէավիւյէն սաղմիւս կոսէ. պիշ. տէան կիսիմ՝ պէատիւնէն նիյսը կո մօտնօ, գազգունը քեշո՞ք կիսի սայնախընցն կո շա. փէ, գիլիթը կո խըլիւլըցնէ, կոսէ թը՝ իկիք հիլէզտ սայնօղը. ինտէաս աստը կիսի թէա. գէավիւյէ կո դողօ, կոսէ թը աման մեղօ, իկիք էօյ մեօհէաք տույ. էան էա կոսէ թը մեօհէաք թուզ նը. կո կիլլնօ սիքիկենին կո հաւ. քէ, կո պայկի սային տուկ:

Թէագէավիւյէն այալուտն կո կիլլէ, կո ճովօ խիւլիւյ մայրկոցը կոսէ թը՝ իկիք աւուլը իս պիտը մեյնմը, հըբղոսկ իկիք, հիգէս ուզից, իս էա շոտ իլիխտիցի ասը թը աւան իլիք էօյ մեօհէաք տույ, էան էա տո. վով հիտ ձիզ հաղղչայնը նայօ համոյ. էնի էա թուրը էյիւ, սաըն թը, իւլ մէ էատ իւ. փէօլ հիտուկը իւյ պիտը քօ քու հիգէն այնու. էան էա կոսէ թը ձանըմ, դոք էան տիսնէաք նը՝ սյովընըդ կու փըլթը:

Իլիք էօյը կո կոլմոն, պիկնպիլիքը ետքի. տէաքը կո հաղղչին թը հիտուկը իգօ նը՝ պիտը սպանին տէյի. ամնոն էվ էա պողու. զը էան թիվնը իկիք նը գազգունը քեշից, գիլիլը խիլցնիլ չիլէնից, չիլէ մը մյուլ, եւ. քէայ, պիկնպիլի կէայ նը՝ վախճուլուն մեղու կիսի մեյն. պողուզը կո տիսնու ույ քէօվը մօյդ ոչ քօ՝ թէագէավիւյէն այսծը կիսի տէօկ. ճիւլը գոյոլ, բիլուն էա կապից, մաքընին ուլուցուց հիծով լոյը ըլլովիցով. իկիք քաղոք մը նը՝ պըղընձ շինէօղ մը օյտտ իկիք. թէա. գէավիւյէն ասոց թը եօյ է էաս տիեղը, չիլէ է էատ քախտոյն կո կուլուն նը. պողուզն էա կոսէ թը աւուտ ալիադը պըղընձ շինուլըն ծախո՞ճ է ու հումմո էա գըլիւրնըն կո ծիծիւն.

ալ ըսաւ թէ ես եմ. է՛ զաւակս, ըսաւ, հիւ մայ ես աղլիկ մ'ունիմ՝ քեզ պիտի տամ, եթէ բան մ'ալ ըսեմ կարենաս ընել նէ. այն ալ ըսաւ թէ ինչ է. ըսաւ թէ հիմայ այն միւս թագաւորը զիս ծաղը կ'ընէ, կ'ընէ թէ՛ ինչ գող եղեր է որ քանի այս տառն (է) չես կրնա գտնի, նայէ ըսեմ. հիմայ դուն էս. նոր ալ բան մը կրնես ընել. Անն ալ կ'ընէ թէ բանը դիւրին է. ելէք կ'ըսէ, մաքի մը է այժ մը բերէք. անոնք ալ կը բերեն, շուտ մը կը մորթէ, մորթը կը հանէ, կ'առնէ հե. տը է կ'երթայ թագաւորին պալատին ետեւը. հոն ալ պտիկ ծով մը կայ եղեր. այս ման. չը տիկը կ'ուսեցնէ, կը հեծնայ լուրին վը. րայէն կ'երթայ թագաւորին պալատին քողը. մաքիւն մորթին վրան մաղը գլուխ բոժոժ մը կ'անցունէ, մորթը կը հագնի, նիզակ մ'ալ ձեռքը կ'առնէ, քառասուն քամ ունի եղեր, քամ մը կը քամէ՝ (պալատին պատին) կ'ել. լայ, քառասուն ալ կը քամէ պատուհանէն կը նայի որ՝ թագաւորը սաղմոն կ'ըսէ. իս. կոն կ'ըսեմ՝ պատուհանէն ներս կը մտնէ, գաւազանը քաշածին պէս առաստաղը կը շափէ, բոժոժները կը հնչեցնէ, կ'ըսէ թէ՛ եկաւ հոգիդ առնողը. այսպէս ըսածին պէս թագաւորը կը գողայ, կ'ըսէ թէ աման, մե. դայ, երեք օր միլոց տուր. այն ալ կ'ըսէ թէ թող ըլլայ. կ'իլնայ գամերը կը հաւաքէ, կը պառկի պալատին տակը:

Թագաւորը առաւօտուն կ'իլլէ, կը կանչէ աւազանին, կ'ըսէ թէ՛ երեք օրէն ես պիտի մեռնիմ, հըրեկնի եկաւ, հոգիս ուզեց, ես ալ շատ աղայեցի, ըսի թէ՛ աման երեք օր միլոց տուր. այն ալ տուաւ ձեզ հետ պատ. րաստուելու համար. անոնք ալ ծաղը ըրին, ըրին թէ, ո՞վ է այդ ուժով հըրեկնիդ որ պիտի գայ քու հոգին առնէ. այն ալ կ'ըսէ թէ՛ եղբայր, դուք այն տեսնաք նէ՛ սիրտեր. նիդ էր փրթի:

Երեք օրը կը մննայ, հազարապետները, զինուորները կը պատրաստեն թէ հըրեկնիկը գայ նէ՛ պիտի սպաննի. քայց դարձեալ մանչը այն կերպ եկաւ նէ գաւազանը քա. չեց, բոժոժները հնչի սկսեց, որչալ մարդ, զինուոր, հազարապետ կար նէ՛ վախերնուն մեղուի պէս մեռան. մանչը կը տեսնէ որ քովը մարդ չկայ՝ թագաւորն առածին պէս տիկը դրաւ, բերանն ալ կապեց, մաքի մոր. թը ուսեցուց հեծաւ լուրը անցաւ. եկաւ քաղաք մը նէ՛ պղինձ (սան) շինող մը հան. դիպեցաւ. թագաւորը ըսաւ թէ՛ ո՞ր է այդ տեղը, ինչ է այդ աղմուկ կ'ընէ նէ. մանչն ալ կ'ըսէ թէ՛ սուտ ալիադը պղինձ շինող. ներուն ծախուած է, ու հիմայ ալ գլխին կը

Թէագէավիւրը տէկնիւրին մըլը իրեան մեղօ՝ մեղօ կուտ։

Ճամբոնքը կո պապընին կոգոն այլէ քա. դպրը Թէագէավիւրէն կո մոտոյ նը՝ կոսէ հասիկ, կո փըյցընէ տէօկնիւրին բիյոնը տէ էան միկէայ Թէագէավիւրը կո տիսնու ույ զինտէք կիմի ինտն ին, Թէագէավիւրը կոսէ դէպի էօնիւյ — էա է իմ գիւրը — Հէօն աճայիպ կո մոնոյ էան Թէագէավիւրը։

Էալ՝ էան պըլըզըն քիշը լաթիյ կո բիյին, կո հագցընին կո տստցնին մեճոտըն մըլ, էալ այլէ Թէագէավիւրը կոսէ, է՝ եալյըմ, աղլիկնիս քիզ պիտի տամ. կո կիլէ փային էորն էա կո կու աօ, աղլիկնէ էա, ու ութ էօր ութ գիշիյ Հայանքը կենին։

Էան է հասի մոյազըն, մինք էա հաս. նընք։

Յեծեն. Թագաւորը տիկին մէլ իսկ, մեղայ մեղայ կ'ըսէ։

Ճամբան կը լմնցնեն կու գան առջի քա. դպրը, Թագաւորին (քով) կը մոնէ նէ՝ կ'ըսէ ահաւասիկ, կը փրցնէ տիկին բերանը. և այն միւս Թագաւորը կը տեսնէ որ իրեն պէս մարդ են, Թագաւորը կ'ըսէ (դէպի) անօր — այս է իմ գողը — հոն զարմանք կը մնայ այն Թագաւորը։

Այլ՝ այն մանչուն ընտիր լաթեր կը բերեն, կը հագցնեն կը նստեցնեն ժողովին մէլ, ալ առջի Թագաւորը կ'ըսէ, է՝ զաւակս, աղլիկս քեզ պիտի տամ. կ'ելլէ դրամին կէսն ալ կու տայ, աղլիկն այլ, և ութ օր ութ գիշեր հարսնիք կ'ընեն։

Այն է հասօր մոյաւտին, մենք ալ հաս. նընք։

Հ Ե Ր Ա Ր Դ Ո Տ Ո Ս Բ • 121

ԱՅՍ Թագաւորը (Հումպսինիտոս) այն. չափ մեծ հարստութիւն գիշեց որ իր յա. ջորէներէն ոչ մէկը կրցաւ գերազանցել զինքը կամ նոյն իսկ մօտենալ իրեն։ Իր հարստութիւնն ապահով տեղ մը գանձել ու. զերով քարուկիր շէնք մը շինել տուաւ, որուն մէկ պատը պալատին կից էր։ Ճարտարա. պետն ալ ուզելով խորամանկութիւն բանե. ցունել, յարմարացուց քար մը՝ զօր երկու կամ նոյն իսկ մէկ մարդ կրնար դիւրու. թեամբ պարիսպէն հանել։ Երբ շէնքն ա. ւարտեցաւ, Թագաւորն իր հարստութիւնը հոն լեցուց։ Ժամանակ մը վերէ ճարտարա. պետն իր կեանքը վերջացած գգալով կան. չեց իր որդիները (նա ունէր երկու որդի) և պատմեց անոնց՝ թէ ինքը կանխաճգալով որ իր տղաքը հանգիստ կեանք մը վայելեն, վարպետութիւն մը բանեցուցած էր Թագա. ւորին զանձատուներ շինած ատեն։ Յետոյ լաւ մը սորվեցուց ամէն ինչ թէ ինչպէս կրնան քարը հանել, ինչ է անոր մեծութիւ. նը. ըսաւ նաև թէ այս բանը գաղտնի պա. ճելով կրնային Թագաւորին հարստութիւնը հանգիստ վայելել։ Հօր մահուանէն ետք՝ որ.

դիները շուտով գործի սկսան. գիշերանց պալատ երթալով՝ որոշուած քարը դիւրու. թեամբ հանեցին մէկ կողմ դրին և շատ դրամ առին տարին։ Երբ Թագաւորը գան. ձարան եկաւ, զարմացաւ տեսնելով ոսկի. ներուն ամանները պակասած և չկարենալով մէկը դատապարտել՝ որովհետեւ կնիքը ամ. բողջ էր և սենեակը լաւ զոցուած։ Երբ եր. կու երեք անգամ եկաւ դիտել և ոսկիները միշտ պակասած տեսաւ, (որովհետեւ գողերը կողոպտուն չէին դագրեր)՝ այսպէս կարգա. դրեց. հրամայեց ոսկիներուն ամաններուն բոլորտիքը որոգայթներ լարել։ Գողերն ա. ռաջուան պէս եկան և աւաղին մոնողը երբ ամանին մօտ գնաց՝ իսկոյն որոգայթի մը մէլ բռնուեցաւ. իր այս դժբախտութիւնը տեսնելով՝ կանչեց իսկոյն իր եղբայրը, պատ. մեց որպիսի էր ինչորեց որ շուտով գլուխը կտրէ, արպէս զի չտեսնէ չճանչնան և միւս եղբայրն ալ միևնոյն ժամանակ չկորսուի։ Սա տեսնելով որ եղբայրն իրաւունք ունի, հնազանդեցաւ և կատարեց. ու քարը շու. կելով գնաց տուն եղբորը զուխն ալ հետ տանելով։

Երբ առաւօտ եղաւ, Թագաւորը գանձա. տուն եկաւ և զարմացաւ տեսնելով գողին մարմինը որոգայթին մէլ անջլուխ, բայց սենեակը անաղարտ, ոչ ալ մուտք մը կամ

եճ մը : Այս շփոթ վիճակին համար հրա-
մայեց գողին դիակը պարիպէն կտնել շուրջն
ալ պահապաններ կանգնեցուց և ըսաւ որ՝
եթէ մէկը զայն տեսնելով լայ կամ տխրի,
խակոյն կապեն և իրեն առկէ հաննն :

Մայրը սաստիկ ցաւելով գաւկին գիակին
կախուելուն վրայ, պատուիրեց միւս տղուն
հնարագիտութեամբ մը եղբորը մարմինը վեր-
ցունել և իրեն բերել : Հակառակ պարագային
սպառնալով ներկայանալ թագաւորին և
յայտնել թէ դրամներն անոր քովն են :
Մայրը ծանրապէս անարգեց որդին, և թէն
սա անոր շատ բան խօսեցաւ, բայց չկրցաւ
համոզել : Այն ժամանակ հետեւեալը խորհե-
ցաւ :

Նա պատրաստեց էշեր, բեռացուց անոնց
գինիով լի տիկեր և սկսաւ քշել : Երբ մօ-
տեցաւ դիակը պահող զինուորներուն, ճար-
պիկութեամբ քակեց երկու երեք տիկերու
կապերը : և երբ գինին սկսաւ հոսիլ, սկսաւ
ձեռքը գլուխը զարնել և աղաղակել : Իբրեւ
թէ շփոթութենէն չէր գիտեր ո՞ր էշուն եր-
թալ նստի : Երբ զինուորները տեսան որ գի-
նին առատ կը հոսի, հանդիպած ամանը ա-
ռին, վրան վազեցին, սկսան հաւաքել հո-
սած գինին և խմել : Իսկ իշավարը բարկա-
ցած ձևանալով կը հայհոյէր անոնց : Ետոյ
զինուորները ջանացին հանդարտեցնել զնա :
այն ատեն բարկութենէն ի՞նչալ կեղծեց :
Վերջապէս էշերը ձամբէն դուրս հանեցին
և տիկերը կարգադրեցին, յետոյ երկար
խօսքերու մէջ ինչպէ՛, կատակներէ և զուար-
ճաբանութիւններէ վերջ՝ անոնց տիկ մը գի-
նի նուիրեց : Զինուորները բազմեցան խմե-
լու : Իշավարն ալ կանչեցին որ իրենց ըն-
կերանայ և միասին խմեն : Համաձայնեցան և
կեցաւ : զինուորները ուրախութեամբ ըն-
դունեցին և երբ տիկը պարպուեցաւ, ուրիշ
մըն ալ տուաւ : Առատ գինի խմելէն գե-
նովցան զինուորները և քունէ ընկնուելով
հոն քնացան : Բայց նա խոր գիշերին ելաւ,
քակեց եղբորը մարմինը, անգթութեամբ
զինուորներուն ալ ալ երեսը ածիլեց, մար-
մինը դրաւ, էշու մը վրայ և եկաւ տուն :
այսպէս կատարելով մօրը հրամանը :

Թագաւորն երբ լսեց թէ գողին մարմինը
վերցուած է, շատ ցաւեցաւ : Բայց որովհետեւ

կ'ուզէր գիտնալ բացարձակապէս թէ ո՞վ է
որ այդքան խորամանկութիւններ կ'ընէ,
գործարեց հետեւեալը, որուն հս չհա-
ւատար :

Նա իր դուստրը դրաւ անպատիւ տեղ մը
և հրամայեց որ բոլոր մեքենեղոյներն անխտիր
ընդունի : Միայն թէ մեքենայէ առաջ ստի-
պէ որ ամէն մարդ իր կեանքին մէջ կա-
տարած ամենաճարպիկ և ամենատաճակ
գործը պատմէ : և եթէ երբէք մէկը ցածնին
գողութեան մասին բան մը պատմէ, բան է
չթողու : Աղիկը կատարեց հօր հրամայածը :
գողը հասկցաւ սակայն թագաւորին նպատա-
կը : Բայց որովհետեւ կ'ուզէր նա գերազան-
ցել թագաւորը հնարագիտութեան մէջ՝ դի-
մեց հետեւալ միջոցին : Նորասպան դիակի
մը թէն ուսէն կտրեց, վերարկուին տակ ծած-
կեց և մտաւ թագաւորին աղիկան քով :
և երբ սա միւսներուն պէս հարցուց, պատ-
մեց թէ՛ իր ամենատաճակ գործը թագա-
ւորին գանձատունը թակարդի մէջ բռնուած
եղբոր գլուխը կտրելն է եղած : Իսկ իր ա-
մենաճարպիկ գործը՝ զինուորները քնացնել
և եղբորը կախուած մարմինը վերցունել :
Աղիկը երբ լսեց՝ վրան յարձակեցաւ : գողը
մուծին մէջ տուաւ անոր՝ դիակին ձեռքը :
նա կարծեց իրապէս ձերբակալել : գողը ձեռ-
քը ձգեց և դուռնէն դուրս փախաւ : Երբ
թագաւորն իմացաւ այս բանը, հիացաւ ա-
նոր իմաստութեան և յանդգնութեան վրայ
և բոլոր քաղաքներուն մէջ հրատարակել
տուաւ որ՝ եթէ գողը դար յայտնուէր, գինքն
անպատիժ պիտի թողուր և մեծամեծ վար-
ձատրութիւններ պիտի ընէր : Գողը փառա-
հացաւ և ներկայացաւ : Հոռապիտիտոս մեծ
սիրով ընդունեց և իր աղիկը տուաւ անոր՝
իրեւ ամենագերագանց մարդուն : — Եւ
գիպտացիները բոլոր ազգերէն գերագանց
էին, և սա Եգիպտացիներուն մէջ գերաւ-
զանց էր հանդիսացած :

